



Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ԳՈՐԾԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

16 հոկտեմբերի 2025 թվական

ք. Երևան

ՀՀ Վճռաբեկ դատարանի նախագահ Լիլիթ Թադևոսյանս, ՀՀ Վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատի նախագահ Գոռ Հակոբյանս, ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական պալատի նախագահ Համլետ Ասատրյանս, ՀՀ Վճռաբեկ դատարանի հակակոռուպցիոն պալատի նախագահ Արթուր Դավթյանս, ՀՀ Վճռաբեկ դատարանի վարչական պալատի նախագահ Հովսեփ Բեդկյանս, նիստում ուսումնասիրելով թիվ ԵԴ2/9800/02/25 (ՎԴ/14426/05/25) գործի ենթակայությունը որոշելու նպատակով այն ՀՀ Վճռաբեկ դատարան ուղարկելու վերաբերյալ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի՝ 2025 թվականի սեպտեմբերի 30-ի որոշումը,

Պ Ա Ր Զ Ե Ց Ի Ն Ք

Գործի դատավարական նախապատմությունը.

1. Ս.Ս.-ը և Ն.Շ.-ը 2025 թվականի օգոստոսի 29-ին ՀՀ վարչական դատարան են ներկայացրել հայցադիմում ընդդեմ ՀՀ գլխավոր դատախազության՝ ՀՀ գլխավոր դատախազության ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչության դատախազ Դ.Մ.-ի 2025 թվականի հուլիսի 28-ի՝ «Ուսումնասիրվող նոր ժամանակահատված սահմանելու վերաբերյալ» որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին:

2. ՀՀ վարչական դատարանի՝ 2025 թվականի սեպտեմբերի 8-ի որոշմամբ հայցադիմումը վերահասցեագրվել է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանին:

3. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի՝ 2025 թվականի սեպտեմբերի 30-ի որոշմամբ, գործի ենթակայությունը որոշելու նպատակով, այն ուղարկվել է ՀՀ Վճռաբեկ դատարան:

4. Գործը ՀՀ Վճռաբեկ դատարանում ստացվել է 2025 թվականի հոկտեմբերի 2-ին:

Ստորադաս դատարանների իրավական դիրքորոշումները.

5. Հղում կատարելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ, 10-րդ, 81-րդ հոդվածներին, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 1-ին հոդվածի 1-ին, 2-րդ, 2.1-ին մասերին, 21-րդ հոդվածին, «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածին, 2-րդ հոդվածին, 3-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ, 13-րդ, 15-րդ, 17-րդ կետերին, 20-րդ հոդվածի 1-ին մասին, ՀՀ Վճռաբեկ դատարանի՝ 2010 թվականի դեկտեմբերի 3-ի թիվ ԵԱՔԴ/1369/02/09, 2016 թվականի ապրիլի 22-ի թիվ ՎԴ/0830/05/14 գործերով արտահայտած իրավական դիրքորոշումներին՝ ՀՀ վարչական դատարանը 2025 թվականի սեպտեմբերի 8-ի որոշմամբ հայցադիմումը վերահասցեագրել է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանին՝ հետևյալ պատճառաբանությամբ. «(...) [Տ]/վյալ պարագայում հայցվորը դատարան ներկայացրած հայցադիմումով խնդրել է անվավեր ճանաչել ՀՀ գլխավոր դատախազության ապօրինի ծագում ունեցող գույքերի բռնագանձման գործերով վարչության դատախազ Դ.Մ.-ի 2025 թվականի հուլիսի 28-ի «Ուսումնասիրվող նոր ժամանակահատված սահմանելու վերաբերյալ» որոշումը: Վերոշարադրյալ իրավական դիրքորոշումների ներքո գնահատելով սույն հայցապահանջը և հաշվի առնելով, որ ԿՎԿ-ի դեպքում վեճն առաջացել է ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթի շրջանակներում, իսկ այդ վարույթի շրջանակներում ծագած վեճերով գործերի քննությունը ՀՀ գործող օրենսդրությամբ վերապահված է ոչ թե ՀՀ վարչական դատարանին, այլ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին, այսինքն՝ հայցապահանջով վեճը բխում է քաղաքացիաիրավական

հարաբերություններից, ուստի ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 11-րդ հոդվածի 1-ին մասի դրույթի համաձայն՝ հայցադիմումը ենթակա է քննության ընդհանուր իրավասության դատարանում¹:

6. Հղում կատարելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 1-ին հոդվածի 2.1-ին մասին, 18-րդ հոդվածի 2-րդ, 3-րդ մասերին, 26-րդ հոդվածի 1-ին, 2-րդ մասերին՝ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանը 2025 թվականի սեպտեմբերի 30-ի որոշմամբ գտել է, որ սույն գործը ենթակա չէ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանին և այդ առնչությամբ դիմել է ՀՀ Վճռաբեկ դատարան՝ նշելով հետևյալը. «(...) Հիմք ընդունելով հայցադիմումում ներկայացված իրավական և փաստական հանգամանքները և դրանք համադրելով վերոգրյալ իրավակարգավորումների և դիրքորոշումների հետ՝ Դատարանն արձանագրում է, որ հայցադիմումում ներկայացված պահանջը ՀՀ գլխավոր դատախազության ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչության դատախազ Դ. Մ.-ի 2025 թվականի հուլիսի 28-ի «Ուսումնասիրվող նոր ժամանակահատված սահմանելու վերաբերյալ» որոշումը վերացնելու /վարչական ակտն անվավեր ճանաչելու/ պահանջի մասին է, հետևաբար այն ենթակա է քննության ՀՀ հսկակոռուպցիոն դատարանում:

(...)

Համաձայն չլինելով ՀՀ վարչական դատարանի կողմից որոշված գործի ենթակայությանը՝ գրնում եմ, որ առկա է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 26-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված՝ ենթակայությունը որոշելու նպատակով ՀՀ վճռաբեկ դատարանին գործն ուղարկելու հիմքը»²:

Սույն որոշման հիմնավորումները և եզրահանգումը.

Սույն գործով բարձրացված իրավական հարցը հետևյալն է. *հիմնավոր՞ է արդյոք Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի հետևությունն այն մասին, որ հայցադիմումում ներկայացված պահանջը վարչական ակտն անվավեր ճանաչելու մասին է և ենթակա է քննության ոչ թե Երևան*

¹ Տե՛ս դատական գործը, թերթեր 93-102:

² Տե՛ս դատական գործը, թերթեր 109-110:

քաղաքի առաջին արյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանում, այլ ՀՀ հակակոռուպցիոն դատարանում:

7. ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունք:

ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ և անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք:

Վճռաբեկ դատարանը, թիվ ՎԴ/4748/05/23 որոշմամբ արձանագրել է հետևյալը. «ՀՀ Սահմանադրության և Կոնվենցիայի վերը շարադրված իրավադրույթները, երաշխավորելով անձի՝ իր իրավունքների և ազատությունների իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների և դատական պաշտպանության իրավունքները, սահմանում են անձի դատարան դիմելու իրավունքը, որը կոչված է սրեղծելու պայմաններ՝ անձի խախտված իրավունքները վերականգնելու համար: Դատարան դիմելու իրավունքն անձի համար ապահովում է իրավական երաշխիքներ՝ իր իրավունքների խախտումների դեպքում սրանսլ արդյունավետ իրավական պաշտպանություն: Այսպեղից հերևում է այն կարևոր կանոնը, որի համաձայն՝ դատական պաշտպանություն անձն սրանում է իր՝ ՀՀ Սահմանադրությամբ, միջազգային պայմանագրերով, օրենքներով և այլ իրավական սկրերով ամրագրված իրավունքների և (կամ) ազատությունների խախտման դեպքում: Դատական պաշտպանությունը չի կարող լինել ինքնանպատակ, այն ունի հսրակ առաքելություն, հսրակ սուբյեկտներ ու հասցեատեր և կոչված է ապահովելու անձի խախտված իրավունքների արդյունավետ վերականգնումը:

Այսպիսով, ՀՀ Սահմանադրությամբ և Կոնվենցիայով նախատեսված է ընդհանուր կանոն, որ դատարանն դիմելու իրավունքը վերապահված է կոնկրետ այն անձին, ում իրավունքները խախտվել են կամ առկա է նրա իրավունքների խախտման վրանգ: Օրենսդիրը, նույնպես առաջնորդվելով այս ընդհանուր կանոնով, վարչական դատավարության օրենսգրքում ամրագրել է յուրաքանչյուրի՝ իր խախտված իրավունքների պաշտպանության համար վարչական դատարանն դիմելու իրավունքը: Անձը կարող է դիմել դատական պաշտպանության, եթե ունի «իրական (ոեալ)» իրավունքներ (լե՛ս, Կարինե Զլալյանն ընդդեմ ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի թիվ ՎԴ/6403/05/12 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 08.05.2014 թվականի որոշումը):

Դատական պաշտպանության իրավունքի իրականացումը հիմնված է փնտրիչականության (դիսպոզիտիվության) սկզբունքի վրա, որն անձի՝ օրենքով փրկված հնարավորությունն է սեփական հայեցողությամբ փնտրիչելու իր նյութական ու դատավարական իրավունքները և դրանց պաշտպանության եղանակները, անձն ինքն է որոշում իր իրավունքների, ազատությունների և օրինական շահերի պաշտպանության համար դիմել, թե չդիմել դատարան, իրականացնել, թե չիրականացնել իր դատական պաշտպանության իրավունքը, ինքնուրույն որոշել հարուցված հայցով իր պահանջների առարկան՝ ծավալը, հիմքը և այլն:

Միաժամանակ անձն իր դատական պաշտպանության հիմնարար իրավունքն իրացնելիս, ինչպես նաև դատարաններն արդարադատություն իրականացնելիս, պետք է առաջնորդվեն փոխալ դատական պաշտպանության ձևի համար օրենսդրությամբ սահմանված կարգով:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (այսուհետ՝ Եվրոպական դատարան) փեսանկյունից՝ դատարանն դիմելու մատչելիության իրավունքը բացարձակ չէ և կարող է ենթարկվել սահմանափակումների: Այդ սահմանափակումները թույլատրվում են, քանի որ մատչելիության իրավունքն իր բնույթով պահանջում է պետության կողմից որոշակի կարգավորումներ, և այս առումով պետությունը որոշակի հայեցողական լիազորություն ունի: Սակայն դատարանի մատչելիության իրավունքի սահմանափակումը պետք է իրականացվի այնպես, որ չխախտի կամ զրկի անձին մատչելիության իրավունքից այնպես կամ այն աստիճան, որ խախտվի այդ իրավունքի

քուն էությունը (տե՛ս, *Tolstoy Miloslavsky v. The United Kingdom* թիվ 18139/91 գանգադով Եվրոպական դատարանի 13.07.1995 թվականի վճիռ, կետ 59): Ըստ Եվրոպական դատարանի՝ դատարանի մարչելիության իրավունքի սահմանափակումը չի կարող համարելի լինել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի հետ, եթե այն չի հերասպնդում իրավաչափ նպարակ, և եթե առկա չէ ողջամիտ հարաբերակցություն ձեռնարկվող միջոցների և հերասպնդվող նպարակների միջև՝ համաչափության առումով (տե՛ս, *Khalfaoui v. France* թիվ 34791/97 գանգադով Եվրոպական դատարանի 14.12.1999 թվականի վճիռ, կետ 36):

Եվրոպական դատարանը նշել է, որ դատարանի մարչելիությունն օրենսդրական կարգավորումների առարկա է, և դատարանները պարտավոր են կիրառել դարավարական համապարասիան կանոնները՝ խուսափելով ինչպես գործի արդարացի քննությանը խոչընդորոող ավելորդ ձևականություններից (ֆորմալիզմից), այնպես էլ չափազանց ճկուն մոտեցումից, որի դեպքում օրենքով սահմանված դարավարական պահանջները կկորցնեն իրենց նշանակությունը: Ըստ Եվրոպական դատարանի՝ դատարանի մարչելիության իրավունքը խաթարվում է այն դեպքում, երբ օրենսդրական նորմերը դադարում են ծառայել իրավական որոշակիության ու արդարադարության պարշաճ իրականացման նպարակներին և խոչընդորոում են անձին հասնել իրավասու դատարանի կողմից իր գործի ըստ էության քննությանը (տե՛ս, *Dumitru Gheorghe v. Romania* թիվ 33883/06 գանգադով Եվրոպական դատարանի 12.04.2016 թվականի վճիռ, կետ 28)»³:

8. ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 80-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Վարչական դատարանը մերժում է հայցադիմումի ընդունումը, եթե՝

1) հայցը ենթակա չէ դատարանում քննության. (...):»:

Նույն օրենսգրքի 81-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Վարչական դատարանը, գործի քննության ցանկացած փուլում պարզելով, որ տվյալ հայցադիմումի պահանջն ընդդարյա չէ իրեն, այն պարճատարանված որոշմամբ վերահասցեագրում է ըստ ընդդարության»:

³ Տե՛ս ՀՀ Վճոարել դատարանի՝ թիվ ՎԴ/4748/05/23 վարչական գործով 2024 թվականի մարտի 25-ի որոշումը:

«(...) Օրենսգրքի 80-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված են այն պայմանները, որոնց առկայությունն օրենքի ուժով անհնարին է դարձնում րվյալ հայցադիմումի հիման վրա արդարադատության իրականացումը: Միաժամանակ, օրենսդիրը ՀՀ վարչական դատարանին վերապահել է հայցադիմումը վերահասցեագրելու լիազորություն: Օրենսգրքի 81-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական դատարանը, գործի քննության ցանկացած փուլում պարզելով, որ րվյալ հայցադիմումի պահանջն ընդդարյալ է իրեն, այն պարճառաբանված որոշմամբ վերահասցեագրում է ըստ ընդդատության:

Հայցադիմումի ընդունելիության փուլում ՀՀ վարչական դատարանի խնդիրն է պարզել հայցադիմումը վերադարձնելու, հայցադիմումի ընդունումը մերժելու և վերահասցեագրելու՝ համապատասխանաբար Օրենսգրքի 79-րդ, 80-րդ և 81-րդ հոդվածներով նախատեսված հիմքերի առկայությունը (բացակայությունը). դրանց բացակայության դեպքում ծագում է ՀՀ վարչական դատարանի՝ րվյալ հայցը վարույթ ընդունելու պարտականությունը (Օրենսգրքի 78-րդ հոդվածի 2-րդ մաս):

Օրենսգրքի 80-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ վարչական դատարանը մերժում է հայցադիմումի ընդունումը, եթե հայցը ենթակա է դատարանում քննության:

ՀՀ վճռաբեկ դատարանը, բացահայտելով հայցադիմումը մերժելու նշված հիմքի բովանդակությունը, արձանագրել է, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգիրքը որդեգրել է այն կառուցակարգը, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 80-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետում ամրագրված՝ «հայցը ենթակա է դատարանում քննության» արտահայտությունը և նույն օրենսգրքի 96-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետում ամրագրված՝ «վեճը ենթակա է որևէ դատարանում քննության» արտահայտությունն ունեն միևնույն նշանակությունը, որը հանգում է հետևյալին. վարչական դատարանում գործ չի կարող հարուցվել, իսկ հարուցված գործի վարույթը ենթակա է կարճման, եթե այդ գործի հիմքում ընկած վեճը (հայցապահանջի հիմքում ընկած վիճելի իրավահարաբերությունը, հայցադիմումով դատարանի առջև բարձրացված հարցը) ենթակա է Հայաստանի Հանրապետությունում գործող առաջին ասրյանի որևէ (ինչպես ընդհանուր իրավասության, այնպես էլ մասնագիտացված) դատարանում քննության: Հետևաբար վեճը (հայցը) դատարանի քննությանը ենթակա

չլինելու հիմքով հայցադիմումի ընդունումը մերժելիս կամ այդ հիմքով գործի վարույթը կարճելիս վարչական դատարանը պարտավոր է ցույց տալ այն իրավական և փաստական հանգամանքները, որոնք վկայում են այն մասին, որ Հայաստանի Հանրապետությունում գործող առաջին արյանի ընդհանուր իրավասության և մասնագիտացված բոլոր դատարաններն իրավասու չեն քննելու և լուծելու տվյալ վեճը (տե՛ս, «Օլիմպ» արտադրական կոուլեքտիվն ընդդեմ Երևանի քաղաքապետարանի թիվ ՎԴ/0998/05/10 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 30.11.2018 թվականի որոշումը):

Վերահասարակելով վերոգրյալ իրավական դիրքորոշումները՝ ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ ՀՀ վարչական դատարանը ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 80-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիման վրա կարող է հայցադիմումի ընդունումը մերժել միայն այն պարագայում, երբ վեճը ենթակա չէ Հայաստանի Հանրապետությունում գործող առաջին արյանի ընդհանուր իրավասության և մասնագիտացված որևէ դատարանի քննությանը, իսկ վեճի՝ միայն ՀՀ վարչական դատարանի քննությանը ենթակա չլինելու պարագայում ՀՀ վարչական դատարանը պետք է հայցադիմումը պատճառաբանված որոշմամբ վերահասցեագրի համապատասխան դատարանին: Այլ կերպ՝ հայցադիմումը վերահասցեագրելու՝ Օրենսգրքի 81-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված հիմքի առկայությունը բացառում է Օրենսգրքի 80-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքով հայցադիմումի ընդունումը մերժելու հնարավորությունը: Եթե ՀՀ վարչական դատարանի որոշման պատճառաբանական մասում շարադրված հիմնավորումներն ու փաստարկները հանգում են նրան, որ տվյալ վեճը ոչ թե հանրային, այլ մասնավոր իրավահարաբերությունների տիրույթում է, ապա հայցադիմումի ընդունումը չի կարող մերժվել Օրենսգրքի 80-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիմքով. նման պատճառաբանության ու փաստարկման պայմաններում կիրառելի է վերահասցեագրման լիազորությունը: Ընդ որում, վերահասցեագրման լիազորությունն իրացնելիս ՀՀ վարչական դատարանը ելնում է միայն տվյալ իրավական վեճի՝ ՀՀ վարչական դատարանի քննությանը ենթակա չլինելու և այլ դատարանի ընդդարյալ լինելու իրողությունից, և վերահասցեագրման լիազորությունը ենթակա է իրացման՝ անկախ իրավասու դատարանի կողմից կիրառելի դատավարական նորմերով

նախատեսված ընդունելիության պայմանները, այդ թվում՝ դատավարական ժամկետների վերաբերյալ պահանջները բավարարելու (չբավարարելու) հանգամանքից:

Ըստ այդմ՝ ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ ի կատարումն դատական ակտերը պարճառաբանելու պարտականության, Օրենսգրքի 80-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիմքով հայցադիմումի ընդունումը մերժելիս ՀՀ վարչական դատարանից պահանջվում է փաստարկել ու հիմնավորել տվյալ վեճի՝ որևէ դատարանի քննության ենթակա չլինելու հանգամանքը: (...)»⁴:

9. ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 26-րդ հոդվածի համաձայն՝ «(...) 2. Դատարանը յոթնօրյա ժամկետում որոշում է կայացնում վարչական դատարանից վերահասցեագրված հայցադիմումը վարույթ ընդունելու կամ գործը Վճռաբեկ դատարան ուղարկելու մասին, եթե համաձայն չէ գործի ենթակայությանը:

(...)

6. Սույն հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով նախատեսված դեպքերում Վճռաբեկ դատարանի նախագահը և Վճռաբեկ դատարանի բոլոր պալատների նախագահները գործը Վճռաբեկ դատարանում սրանալու պահից տասնօրյա ժամկետում որոշում են գործի ենթակայությունը:

7. Սույն հոդվածի 6-րդ մասով նախատեսված որոշումն ընդունելու համար Վճռաբեկ դատարանի նախագահը հրավիրում է նիստ՝ իր և Վճռաբեկ դատարանի բոլոր պալատների նախագահների մասնակցությամբ, որն իրավագոր է, եթե դրան մասնակցում են նիստին մասնակցելու իրավունք ունեցող բոլոր անձինք:

8. Սույն հոդվածի 6-րդ մասով նախատեսված որոշումն ընդունվում է նիստին ներկա անձանց ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ: Քվեարկելիս ձեռնպահ մնալ չի թույլատրվում: (...)»:

«Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի 24-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Հակակոռուպցիոն դատարանին են ենթակա Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքով

⁴ Տե՛ս ՀՀ Վճռաբեկ դատարանի՝ թիվ ՎԴ/4748/05/23 վարչական գործով 2024 թվականի մարտի 25-ի որոշումը:

հակակոռուպցիոն դատարանների իրավասությանը վերապահված վարույթները, ինչպես նաև դատախազի կողմից հարուցված՝ քաղաքացիական դատավարության կարգով պետության գույքային և ոչ գույքային շահերի պաշտպանության հայցերով և «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» օրենքի հիման վրա գույքի բռնագանձման հայցերով հարուցված քաղաքացիական գործերը (այսուհետ՝ հակակոռուպցիոն քաղաքացիական գործեր)»:

«Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք) 1-ին հոդվածի համաձայն՝ «Սույն օրենքը կարգավորում է ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթի հետ կապված հարաբերությունները, սահմանում է ուսումնասիրություն սկսելու հիմքերը, ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթ հարուցելու և ուսումնասիրություն իրականացնելու իրավասու մարմինների շրջանակը, ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման առնչությամբ միջազգային համագործակցության կանոնները, ինչպես նաև կարգավորում է ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման հետ կապված այլ հարաբերություններ»:

Օրենքի 6-րդ հոդվածի համաձայն՝ «1. Իրավասու մարմինը սույն օրենքի 4-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված դեպքում կայացնում է ուսումնասիրություն սկսելու մասին որոշում՝ նշելով դրա հիմքում ընկած փաստական փյույակները և սույն օրենքի 5-րդ հոդվածում նախատեսված այն հիմքը, որի հիման վրա սկսվում է ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթը: Իրավասու մարմինն ուսումնասիրություն սկսելու մասին որոշմամբ նաև նշում է այն անձի փյույակները, որին ենթադրաբար պատկանում է ապօրինի ծագում ունեցող գույք:

2. Նույն գույքի առնչությամբ ուսումնասիրություն կարող է սկսվել, եթե առկա է նախորդող ուսումնասիրության հիմքերից տարբերվող հիմք, որը հայտնի չէր և չէր կարող հայտնի լինել իրավասու մարմինն նախորդ ուսումնասիրությունն սկսելու պահին:

3. Իրավասու մարմինը կարող է վերսկսել ավարտված ուսումնասիրությունը Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված՝ նոր երևան եկած կամ նոր հանգամանքներ ի հայտ գալու դեպքում, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի

համապատասխան կարգավորումների համաձայն՝ դատական ակտի վերանայման բողոք նախապարտադրելու և ներկայացնելու նպատակով:

4. Ուսումնասիրություն սկսելը և դրա իրականացումը կանոնակարգող՝ սույն օրենքով նախատեսված ընթացակարգային պահանջների խախտումներն առաջացնում են միայն այնպիսի հետևանքներ, որոնք ուղղակիորեն նախատեսված են սույն օրենքով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով կամ այլ օրենքներով»:

Օրենքի 3-րդ հոդվածով սահմանված են օգտագործվող հիմնական հասկացությունները: Նշված հոդվածի 1-ին մասի 13-րդ կետի համաձայն՝ «Հայց հարուցելու հիմքերի ուսումնասիրություն (այսուհետ՝ ուսումնասիրություն)՝ ընթացակարգ, որն ուղղված է ապօրինի ծագում ունեցող գույքի առկայության, դրա ծավալների և շահագրգիռ անձանց շրջանակի վերաբերյալ տվյալներ ձեռք բերելուն:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Իրավասու մարմինը սույն օրենքի 4-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված դեպքում կայացնում է ուսումնասիրություն սկսելու մասին որոշում՝ նշելով դրա հիմքում ընկած փաստական տվյալները և սույն օրենքի 5-րդ հոդվածում նախատեսված այն հիմքը, որի հիման վրա սկսվում է ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթը: Իրավասու մարմինն ուսումնասիրություն սկսելու մասին որոշմամբ նաև նշում է այն անձի տվյալները, որին ենթադրաբար պատկանում է ապօրինի ծագում ունեցող գույք»:

Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ «Ուսումնասիրություն սկսելը և դրա իրականացումը կանոնակարգող՝ սույն օրենքով նախատեսված ընթացակարգային պահանջների խախտումներն առաջացնում են միայն այնպիսի հետևանքներ, որոնք ուղղակիորեն նախատեսված են սույն օրենքով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով կամ այլ օրենքներով»:

Օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Հիմք ընդունելով ապօրինի ծագում ունեցող գույքի վերաբերյալ ուսումնասիրության նյութերով հայտնի հանգամանքները՝ իրավասու մարմինը որոշում է ուսումնասիրվող ժամանակահատվածը, որը ներառում է ուսումնասիրությունն սկսելու մասին որոշման կայացումից մինչև ուսումնասիրության ավարտն ընկած ժամանակահատվածը, ինչպես նաև ուսումնասիրությունն սկսելու մասին որոշման կայացումից առաջ ընկած ժամանակահատվածը, որը չի կարող լինել

ավելի երկար, քան ուսումնասիրությունն սկսելու մասին որոշման կայացմանը նախորդող տասը տարին, բացառությամբ սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված դեպքերի»:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Եթե ուսումնասիրության նյութերով ի հայտ են գալիս սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված ժամանակահատվածից ավելի վաղ ձեռք բերված ապօրինի ծագում ունեցող գույքի վերաբերյալ կասկածներ, և այդպիսի գույքի ձեռքբերմանն առնչվող ապացույցները պահպանված են, ապա իրավասու մարմինը կայացնում է որոշում՝ սահմանելով ուսումնասիրվող նոր ժամանակահատված, որը կարող է ներառել բացառապես 1991 թվականի սեպտեմբերի 21-ից հետո ընկած ժամանակահատվածը»:

Օրենքի 13-րդ հոդվածի համաձայն՝ «1. Ուսումնասիրության նախնական արդյունքներով իրավասու մարմինը կազմում է ուսումնասիրության արդյունքների վերաբերյալ ամփոփագիր, որով որոշում է՝

1) դադարեցնել ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթը կամ

2) ձեռնարկել միջոցներ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման հայցի հարուցման ուղղությամբ:

2. Իրավասու մարմինը կարող է ձեռնարկել սույն օրենքով նախատեսված միջոցներ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման հայցի հարուցման ուղղությամբ, եթե առկա են բավարար հիմքեր՝ ենթադրելու, որ անձին պարկանում է ապօրինի ծագում ունեցող գույք, որի արժեքն ուսումնասիրության տվյալներով գերազանցում է սույն օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված շեմը:

3. Այն դեպքում, երբ ամփոփագրի հիման վրա հնարավոր չէ ողջամրորեն եզրակացնել, որ առկա է սույն օրենքով նախատեսված կարգով բռնագանձման ենթակա ապօրինի ծագում ունեցող գույք, իրավասու մարմինը որոշում է կայացնում բռնագանձման վարույթը դադարեցնելու վերաբերյալ: Բռնագանձման վարույթը դադարեցնելու վերաբերյալ որոշումն անհապաղ ուղարկվում է Գլխավոր դատախազի՝ ոլորտը համակարգող տեղակալին, որը որոշման անհիմն կամ ապօրինի լինելու դեպքում իրավասու է վերացնելու այն և իրավասու մարմնին հանձնարարելու միջոցներ

ձեռնարկել ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման հայցի հարուցման ուղղությամբ:

Օրենքի 18-րդ հոդվածի համաձայն՝ «1. Շահագրգիռ անձանց ներկայացրած նյութերի և հավաքված ապացույցների հիման վրա իրավասու մարմինը կազմում է ուսումնասիրության արդյունքների վերաբերյալ եզրակացություն:

2. Եթե կան բավարար հիմքեր՝ ենթադրելու, որ անձին պատկանում է ապօրինի ծագում ունեցող գույք, որի արժեքն ուսումնասիրության փյալներով գերազանցում է սույն օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված շեմը, ապա իրավասու մարմինը կազմում է եզրակացություն, (...):

3. Այն դեպքում, երբ հավաքված նյութերով հնարավոր չէ ողջամրորեն եզրակացնել, որ առկա է սույն օրենքով նախատեսված կարգով բռնագանձման ենթակա ապօրինի ծագում ունեցող գույք, իրավասու մարմինը կայացնում է ուսումնասիրությունն ավարտելու մասին որոշում (...):»:

Անդրադառնալով խնդրո առարկա հարցին, Սահմանադրական դատարանը նշել է. «Ըստ էության, «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» ՀՀ օրենքի շրջանակներում ՀՀ գլխավոր դատախազության իրավասու մարմնի կողմից առաջին աստիճանի դատարան հայցադիմում ներկայացնելու հիմքը «Ուսումնասիրություն սկսելու մասին» և «Ուսումնասիրվող նոր ժամանակահատված սահմանելու վերաբերյալ» որոշումների հիման վրա իրականացված ուսումնասիրությունը և դրա արդյունքների վերաբերյալ կազմվող եզրակացությունն են: Այսինքն՝ դատախազի կողմից կայացված՝ ուսումնասիրության արդյունքների վերաբերյալ եզրակացությունը կազմում է ՀՀ գլխավոր դատախազության իրավասու մարմնի կողմից դատարան ներկայացվող հայցադիմումի, հետևաբար և դրա հիման վրա իրականացվող դատական քննության առանցքը: Ուստի ինչպես ուսումնասիրություն սկսելու մասին և ուսումնասիրության նոր ժամանակահատված սահմանելու մասին որոշումների, այնպես էլ ուսումնասիրության արդյունքների վերաբերյալ եզրակացության վիճարկման հիմքում դրված փաստերի իրավաչափությանն անդրադարձ կարող է կատարվել հենց համապատասխան գործի դատական քննության ընթացքում: Ավելին, նշված փաստերը

կարող են դատական քննության և գնահատման առարկա դառնալ նաև գործն ըստ էության լուծող դատական ակտի բողոքարկման շրջանակներում: Այսպիսով, դատախազի կողմից կայացված՝ ուսումնասիրություն սկսելու մասին որոշման, ինչպես նաև ուսումնասիրության արդյունքների վերաբերյալ եզրակացության վիճարկումը հնարավոր է իրականացնել «հետաձգված բողոքարկման» շրջանակներում:⁵

Սահմանադրական դատարանը հարկ է համարել նշել նաև, որ ինքնին ուսումնասիրություն սկսելու որոշումը չունի անհատական իրավունքին կամ ազատությանը միջամտության ազդեցություն: Այս որոշման կայացմամբ մեկնարկում է հայց հարուցելու հիմքերի ուսումնասիրությունը (այլ կերպ՝ հայցի հարուցման նախապայրարաստումը), ինչը կարող է ավարտվել թե՛ հայցի հարուցմամբ, թե՛ հայցի հարուցումից հրաժարումով: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ուսումնասիրություն սկսելու մասին որոշումն ինքնին չի միջամտում շահագրգիռ անձանց իրավունքներին կամ ազատություններին, Օրենքի հիման վրա քննվող վարույթի շրջանակներում այդ որոշումը դատական կարգով բողոքարկելու հնարավորության բացակայությունը չի կարող հանգեցնել անձի՝ իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունքի խախտմանը»:⁶

10. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից հետևում է, որ.

- Ս.Ս.-ը և Ն.Շ.-ը 2025 թվականի օգոստոսի 29-ին հայցադիմում են ներկայացրել ՀՀ վարչական դատարան (այսուհետ նաև՝ Վարչական դատարան) ընդդեմ ՀՀ գլխավոր դատախազության՝ ՀՀ գլխավոր դատախազության ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչության դատախազ Դ.Մ.-ի 2025 թվականի հուլիսի 28-ի՝ «Ուսումնասիրվող նոր ժամանակահատված սահմանելու վերաբերյալ» որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին⁷,

- հայցադիմումը ՀՀ վարչական դատարանի՝ 2025 թվականի սեպտեմբերի 8-ի որոշմամբ վերահասցեագրվել է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանին՝ այն պատճառաբանությամբ, որ տվյալ դեպքում հայցվորը դատարան ներկայացրած հայցադիմումով խնդրել է անվավեր

⁵ Տես՝ ՀՀ Սահմանադրական դատարանի 2022 թվականի նոյեմբերի 21-ի ՍԴԴԿՈ-64 և 2023 թվականի մայիսի 16-ի ՍԴԱՈ-43 որոշումները,

⁶ Տես՝ ՀՀ Սահմանադրական դատարանի 2025 թվականի ապրիլի 4-ի ՍԴՈ-1776 որոշումը:

⁷ Տե՛ս սույն որոշման 1-ին կետը:

ճանաչել ՀՀ գլխավոր դատախազության ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչության՝ «Ուսումնասիրվող նոր ժամանակահատված սահմանելու վերաբերյալ» որոշումը, ուստի վեճն առաջացել է ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթի շրջանակներում, իսկ այդ վարույթի շրջանակներում ծագած վեճերով գործերի քննությունը ՀՀ գործող օրենսդրությամբ վերապահված է ոչ թե ՀՀ վարչական դատարանին, այլ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանին⁸:

- Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանը (այսուհետ նաև՝ Առաջին ատյանի դատարան) 2025 թվականի սեպտեմբերի 30-ի որոշմամբ դիմել է Վճռաբեկ դատարան՝ գործի ենթակայությունը որոշելու համար: Անդրադառնալով ՀՀ գլխավոր դատախազության ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչության դատախազ Դ.Մ.-ի 2025 թվականի հուլիսի 28-ի՝ «Ուսումնասիրվող նոր ժամանակահատված սահմանելու վերաբերյալ» որոշումը վերացնելու (վարչական ակտն անվավեր ճանաչելու) հայցվորի պահանջին, Առաջին ատյանի դատարանը գտել է, որ այն չի բխում ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի նպատակներից և ենթակա չէ քննության ՀՀ քաղաքացիական դատավարության կարգով:

Առաջին ատյանի դատարանը գտել է, որ հայցադիմումով ներկայացված պահանջը ենթակա է քննության ՀՀ հակակոռուպցիոն դատարանում⁹:

11. Նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 7-9-րդ կետերում վկայակոչված իրավադրույթների և արտահայտված իրավական դիրքորոշումների համատեքստում՝ գտնում ենք, որ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի հետևությունն այն մասին, որ հայցադիմումում ներկայացված պահանջը վարչական ակտն անվավեր ճանաչելու մասին է և ենթակա է քննության ոչ թե Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանում, այլ ՀՀ հակակոռուպցիոն դատարանում, հիմնավոր է մասնակի՝ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանում քննության

⁸ Տե՛ս սույն որոշման 5-րդ կետը:

⁹ Տե՛ս սույն որոշման 6-րդ կետը:

ենթակա չլինելու մասով: Միաժամանակ, հարկ է նկատել, որ հայցապահանջի՝ քաղաքացիական դատավարության կարգով քնության ենթակա չլինելն ինքնին չի հանգեցնում դրա՝ այլ դատարանում քնության ենթակա լինելու հանգամանքի առկայությանը, որը սույն գործով կարող էր բացառել հայցադիմումը վերահասցեագրելու մասին որոշում կայացրած ՀՀ վարչական դատարանը:

Օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ մասի կարգավորումներից հետևում է, որ ուսումնասիրությունն սկսելը և դրա իրականացումը կանոնակարգող՝ Օրենքով նախատեսված ընթացակարգային պահանջների խախտումների հետևանքները, դրանից բխող անձի իրավունքների, այդ թվում՝ դատարան դիմելու իրավունքի իրացման գործընթացները պետք է դիտարկել ոչ թե այն տրամաբանությամբ, որ անձն ուսումնասիրությունն սկսելու և դրա իրականացումը կանոնակարգող՝ Օրենքով նախատեսված ընթացակարգային պահանջների ենթադրյալ խախտումներ հայտնաբերելիս պետք է որպես դրա հետևանք դիտարկի անմիջականորեն դատարան դիմելու միջոցով դրանց անվավերությունը, գործողություններ կատարելուն պարտավորեցնելը կամ իրավունքի անմիջական պաշտպանության այլ եղանակները, այլ անձը կարող է իր իրավունքներն իրացնել այն հետևանքների ձևաչափով, որոնք նախատեսված են Օրենքով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով կամ այլ օրենքներով: Ընդ որում, նշված կանոնակարգումն անձին չի զրկում իր իրավունքների և օրինական շահերի պաշտպանության հնարավորությունից, այլ սահմանում է դրանց իրականացման որոշակի ընթացակարգային առանձնահատկություններ՝ հաշվի առնելով ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վերաբերյալ *հայցը դատարանում քննելու ժամանակ* գործող դատավարական կարգավորումները, որոնք նույնպես անձին հնարավորություն են ընձեռում բարձրացնել այդ հարցերը:

Ողջ վերոգրյալի վերլուծությունների համատեքստում արձանագրում ենք, որ օրենսդիրն ուղղակիորեն չի նախատեսել ուսումնասիրություն սկսելու մասին որոշման նկատմամբ դատական վերահսկողության հնարավորությունը՝ բացառելով դրա անմիջական վիճարկման հնարավորությունը դատական կարգով, հետևաբար այդ որոշումն անմիջականորեն չի կարող վիճարկվել դատական կարգով, ինչը բացառում է

դրա իրավաչափության վերաբերյալ իրավական վեճի՝ դատական կարգով հարուցման և քննության հնարավորությունը:

Հարկ է արձանագրել նաև, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 80-րդ և 81-րդ հոդվածների 1-ին մասերի իրավակարգավորումների համատեքստում, *հայցը դատարանում քննության ենթակա չլինելու հանգամանքը պետք է բացառվի մինչև վեճը քաղաքացիական դատավարության կարգով քննության ենթակա լինելու հանգամանքի ուժով այն ըստ ընդդատության վերահասցեագրելու լիազորության կիրառումը*¹⁰, մինչդեռ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 26-րդ հոդվածի իրավակարգավորումների պայմաններում, Վարչական դատարանից վերահասցեագրված հայցադիմումը ստանալու դեպքում, սույն գործով Առաջին ատյանի դատարանն իրավասու էր կայացնելու բացառապես հետևյալ որոշումներից որևէ մեկը՝

1. վարչական դատարանից վերահասցեագրված հայցադիմումը վարույթ ընդունելու, կամ

2. գործի ենթակայության կապակցությամբ անհամաձայնության դեպքում՝ այն Վճռաբեկ դատարան ուղարկելու վերաբերյալ:

Վերոգրյալի հաշվառմամբ գտնում ենք, որ թիվ ԵԴ2/9800/02/25 (ՎԴ/14426/05/25) գործն ըստ Սամվել Սարգսյանի և Նուրիցա Շահբազյանի հայցի ընդդեմ ՀՀ Գլխավոր դատախազության, պետք է ուղարկել ՀՀ վարչական դատարան:

Միաժամանակ անհրաժեշտ է արձանագրել, որ Ս. Ս.-ի և Ն. Շ.-ի հայցով ներկայացվել է ՀՀ գլխավոր դատախազության ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչության դատախազ Դ. Մ.-ի 2025 թվականի հուլիսի 28-ի՝ «Ուսումնասիրվող նոր ժամանակահատված սահմանելու վերաբերյալ» որոշումն անվավեր ճանաչելու պահանջ, հետևաբար իրավաչափ չէ ՀՀ վարչական դատարանի՝ 2025 թվականի սեպտեմբերի 8-ի որոշմամբ արտահայտված դիրքորոշումն առ այն, որ տվյալ դեպքում *«վեճն առաջացել է ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթի շրջանակներում, իսկ այդ վարույթի շրջանակներում ծագած վեճերով գործերի քննությունը ՀՀ գործող օրենսդրությամբ վերապահված է ոչ թե ՀՀ*

¹⁰ Տե՛ս, mutatis mutandis, ՀՀ Վճռաբեկ դատարանի՝ թիվ ՎԴ/4748/05/23 վարչական գործով 2024 թվականի մարտի 25-ի որոշումը:

վարչական դատարանին, այլ երևան քաղաքի առաջին աստիճանի ընդհանուր իրավասության դատարանին»¹¹:

Հիմք ընդունելով վերոշարադրյալը և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 26-րդ հոդվածով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի Ն Ք

թիվ ԵԴ2/9800/02/25 (ՎԴ/14426/05/25) գործն ըստ Ս.Ս.-ի և Ն.Շ.-ի հայցի ընդդեմ ՀՀ գլխավոր դատախազության՝ ՀՀ գլխավոր դատախազության ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչության դատախազ Դ. Մ.-ի 2025 թվականի հուլիսի 28-ի «Ուսումնասիրվող նոր ժամանակահատված սահմանելու վերաբերյալ» որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին, ուղարկել ՀՀ վարչական դատարան:

ՀՀ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ	ՀՀ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ	ՀՀ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ
ՆԱԽԱԳԱՀ	ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ	ՔՐԵԱԿԱՆ ՊԱԼԱՏԻ
ԼԻԼԻԹ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ	ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀ	ՆԱԽԱԳԱՀ
	ԳՈՌ ՀԱԿՈԲՅԱՆ	ՀԱՄԼԵՏ ԱՍԱՏՐՅԱՆ

ՀՀ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ	ՀՀ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ
ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ	ՎԱՐՉԱԿԱՆ
ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀ	ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀ
ԱՐԹՈՒՐ ԴԱՎԹՅԱՆ	ՀՈՎՍԵՓ ԲԵԴԵՎՅԱՆ

¹¹ Տե՛ս սույն որոշման 5-րդ կետը: